600.0193.30.05.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

30 մայիսի 2018 թվականի №193Ա
քաղ. Երևան

«ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով,

բ) Հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերության ֆինանսական հաշվետվությունների ձևերը սահմանելու մասին» N572Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ տարեկան արդյունքներով ֆինանսական հաշվետվությունների (այսուհետ՝ Հաշվետվություններ) ներկայացման ժամկետը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 20-ն է,

գ) «ԷՆԵՐԳԱԻՄՊԷՔՍ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2017 թվականի արդյունքներով Հաշվետվությունները Հանձնաժողով է ներկայացրել 2018 թվականի մայիսի 4-ին,

դ) Հանձնաժողովը Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման փաստի ուսումնասիրման նպատակով 2018 թվականի մայիսի 4-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 4-ի ՈԱԲ-928Ֆ գրությամբ,

ե) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաշվետվությունների ներկայացման՝ Որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանն ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
30 մայիսի 2018թ.